



ԶԱՅՆՄԸ ՊՈՍԹՈՆԵ

Այսօր ամենուս և լուսաւորեալ ծանօթ է Հայաստանի խնդրոյն հետեւեալէ ինչ գոյն առնելն, ու սորա մի յաջող լուծման յանգին ջանից և յարստեւածեան կարօտ ըլլալը: Գիտութիւն և յառաջդիմութիւն մեզ պարզած են թէ ո՛ր և է նպատակի մը յաջողութեան առաջին սկզբնատարը ինքնօգնութիւն է, որոյ հաստատամտօրէն յարստեւածեամբ միայն յաջողութիւն կրնայ ձեռք բերուիլ:

Մեր արեւնակցաց վիշտերու ճիշդն այսօր աշխարհի կը հնչեն, և Հայաստան երկրի մէջ գործուած աղէկտուր անգութութիւններն ամէն ուղղամիտ օտարականաց և աղգասէր Հայոց զայրոյթը կը բորբոքեն:

Այս ճնշեալ աղբին ցաւոց դարման մը գտնելը օրուան խնդիր եղած է, և օտարազգի աղատամիտք ու աղգասէր Հայոց խմբակը ջանք ի գործ դնելու վրայ են սոյն դարմանն ձեռք բերելու համար: Արդեօք Ամերիկեան Հայերն այս փառնուի ու կենսական խնդրոյն լուծման նպատակով ինչ միջոցներ ձեռք առնելու վրայ են, կամ ինչ կրնան ընել: Մեր համոզումն սա է թէ՛ ոչ ինչ: Այսօր տակաւին այն վիճակի մէջ չենք, և մեր այս ընթացքով ապագային մէջ ալ բան մը կարենալ ընելու հաւանականութիւններն շատ քիչ են:

Եթէ ընդունած ենք սա ճշմարտութիւն թէ միութեան մէջն է զօրութիւն, ուրեմն աչքերնիս դառնունք մը դէպ յայն կողմ:

Այսօր Միացեալ Նահանգներու գլխաւոր քաղաքներէն շատերուն մէջ 30—40 է մինչև 500 կամաւելի Հայեր կան: այս քաղաքներէ ոմանց մէջ Հայկական միութիւններ կազմուած են, որոց գրեթէ ամենուն նպատակներն իրարու նման են և աղգասիրական եթէ ոչ յայտնի, գոնէ առ այն ձգտում մը ունին: Ուրեմն ինչու այս ցիր ու ցան փոքրիկ ընկերութիւնները մի սահմանադրութեան ներքեւ չի միանան, և իրենցմէ ընտրեալ ներկայացուցիչ վարչական կեդրոնի մը մի մասնաճիւղը չի կազմեն, որպէս զի սոցա առանձնակի զօրութիւններն իմիասին բերուելով, հզօրացոյն մարմին մը գոյանայ, ու առաւել կարող ըլլայ աղբի ցաւոցն դարման մը ըլլալ:

Անտարակոյս այս կէտ ուշադրութեան արժանի է, և որչափ շուտ գործադրուի, այնչափ նպաստաւոր կըլլայ Հայութեան:

Նիւ Եորքի Հայկական Միութիւնը այս շարժման առաջնորդն պարտի ըլլալ իւր նախագոյութեան ու կեդրոնական գիրքին պատճառաւ, որպէս զի աւելի դիւրութիւն ըլլայ. եւ թող ամեն Ամերիկեան Հայ ընկերութիւններն ընտրեն մի ներկայացուցիչ անգամ, և սուք կազմեն մի յանձնախումբ և գումարուին կեդրոնական

քաղաքի մը մէջ, ու հարկ եղած քայլերն առնեն սա միացում առաջ բերելու համար:

Մենք կը թելադրեմք որ Նիւ Եորքի Հայկական Միութիւնն զրկէ յարմար չըջարեականներ ամէն ընկերութեանց և նոցա կարծիքն առնու այս մասին և ձեռնարկէ խնդրոյ գործադրութեան

Պոսթոն

ԶԳՈՆ

ԹԻՐԱՅԱՆ ՆՈՐ ՎԱՅՐԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Ն. Ե. Հէրըլտի Օգոստոս 22 թուի մէջ հրատարակեալ մի հեռագիր կը ծանուցանէ թէ Թիֆլիզէ հաղորդած հեռագրական լուրերու նայելով՝ Բ. Դուռն գաղտնի չըջարեական նամակներ դրած է Հայաբնակ վիլայէթներու կառավարչապետաց՝ հրամայելով անոնց յարգել իրենց առանձնաշնորհութիւններն ու զգուշանալ Գուրտեմէնեղէ, որոց ծառայութիւնն կրնայ օգտակար ըլլալ պատերազմի մը ժամանակ: Հեռագիրն կը յաւելու նաեւ թէ, կը վախճուի որ այս չըջարեական չարիքներ յառաջ պիտի բերէ քրիստոնէից համար:

Լօնտոնի «Տէլիֆոն» սա հեռագրի վրայ տեսութիւն մ'ըրած ատեն յոյս կը յայտնէ ըսելով թէ Եւրոպա այսպիսի գարշիկ անգգամութիւն մը արգիլելու համար եթէ չուզէ միջամտել, Ռուսիա պիտի միջամտէ անտարակոյս, ընդ փոյթ և շտապ:

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՅ ԱՆՑԵԱԼ ՆԻՍՏՐ

Հայ Գաղթականութեան Սեպտ. 10 ի Ընդհ. Նիստին մէջ միաձայն հաւանութեամբ Տքթ. Գարբիլեանի յանձնուցաւ յանձնախումբ մը կազմել, աղգային ընթացիկ գործերն կառավարելու ու Հայրենասիրական ձեռնարկութիւններ ընելու պաշտօնով: Այս յանձնախումբ կազմուեցաւ քանի մ'օրի մէջ ու անմիջապէս գործի ձեռնարկեց: Նորակազմ յանձնաժողովն, որ 6 անդամներէ կը բաղկանայ, որոնց իւր առաջին Նիստին մէջ, 2,000 Նուիրատուներ տպագրելու ու վաճառելու առ ի նպատակ Մարտի 1-ից Հայրենասիրական Միութեան, Յանձնաժողովոյն այս որոշումը ընդ փոյթ գործադրուեցաւ: Հայ Գաղթականութիւնն իւր վերջի Նիստին մէջ, որն տեղի ունեցաւ ամսոյս 17 ին Արեւելեան Աստղ սրահին մէջ, սոյն Նուիրատուներէ գնեց 465 հատ, և մեծ յոյս կայ թէ մի քանի շաբաթէ վերջ նոր Նուիրատուներ պիտի տպագրուին վաճառուելու համար: Յանձնաժողովն մօտերս պատկերազարդ ու փառաւոր յայտարարութիւններ պիտի հրատարակէ այս մասին Հայ Գաղթականութեան մէջ:

ՆԱՄԱԿ ՓՐՕՎԻՏԷՆՍԷ

Փրովիտէն, Օգոստոս 10

Քաղաքիս Հայ գաղթական խումբն շատ մանուկ է տակաւին. քանի մը տարի առաջ ընաւ Հայ մը չկար հոս, երկու տարի առաջ Տիգրան Խոհարարեան անուն Տիգրանակերտցի երիտասարդ մը գումար քաղաքիս Հայ խմբին Սահմանոր երբեմն կը գործէր Ուսման թիւ գործարանին մէջ և երբեմն ալ գըրագրութեամբ կը պարապէր նոյն գործատան մէջ, ուղեւով տեղափոխութիւն մը ընելով Փրովիտէն ճամբորդեց, ու հոս յաջողեցաւ մուտ

գտնել վայրաշարժ շինող գործարանի մը մէջ, ուր երկրորդ կարգի գըրագրութեան պաշտօն մը ձեռք ձգեց, ու շատ Հայերու ալ գործ գտաւ: Այժմ տեղիս Հայ գաղթականութիւնն ունի իւր 50 ի չափ անդամներ որոց մեծ մասն յիշեալ գործարանի մէջ են, ու մնացեալը զբաղեալ են բամպակի գործով:

— Սարաճեան Ս. Հոր ժամանումն ինչպէս ամէն Ամերիկեան Հայերու նոյնպէս և մեր խմբին ուրախութիւն պատճառեց. կը ցաւինք որ չունենալով դեռ կազմակերպութիւն մը, կարող չենք Նորին Արժանապատուութիւնը հրաւիրել և հոս, բայց վստահ ենք, Տէր խմբագիր, որ Սարաճեան Արժ. Յովսէփ Վարդապետ չի պիտի մոռանայ նաեւ քաղաքիս խումբն, որոյ կողմնէ բարի գալուստ կը մաղթենք Նորին Արժանապատուութեան՝ յղելով միանգամայն մեր որդիական խոնարհ յարգանքներն, «Վուրճանգաղի» ի միջոցաւ:

— Քաղաքիս Հայ խմբին մէջ, ուրախութեամբ կը ծանուցանեմ թէ կան բաւական աղգասէր անձեր որք մտադիր են քիչ ատենէն կազմակերպութիւն մը ունենալ աղգային. այս մասին ձեր թղթակիցը՝ Ժամանակին՝ պարբերաբար պիտի հաղորդէ «Վուրճանգաղ» ի ընթերցողաց ամէն մանրամասնութիւն: Թ. Բ.

ՄԱՆՐԱՆՈՒՐԲ

— Պ. Թովմաս Էլիենեան, որ իւր երեք ամիս առաջ Նիւ Եորքէ դէպ Հայրենիք ուղևորեցաւ, Երեսիոյ մէջ իր մահկանացուն կնքէր է՝ առանց կարենալ իր Հայրենի քաղաքն, Տիգրանակերտ ժամանելու, ուր իւր ծնողը կապաւելին քիչ ատենէն Տարաբաղէ Հանգուցեալն երեք տարի առաջ Ամերիկա եկած էր, և տեսած էր միայն քսան գարուններ:

— Փաթըրսընի «Փրէս» Լրագրի Յուլիս 27 թուին մէջ հետեւեալն կը կարդանք «Իւնայթըտ Փրէսպիթերի» երկնեցոյ քարոզիչն Պատ. Ալէքսանդր Ըմիթի-Էրէկ ամուսնացեց քաղաքիս ընկիւններէն Պ. Թովմաս Թիւսիւզեան օրիորդ Լուիզա Փափաղեանի հետ: Ամուսնութիւնն նշանաւոր բան մէր այնու զի հարսն Հայաստանէ կուգար միանալու իր ապագայ երկան հետ: Թէ՛ Պարոն և թէ Տիկին Թիւսիւզեան Հայաստանցի են Պ. Թիւսիւզեան այնչափ ատենէ ի վեր այս երկրի մէջ կը գտնուէր, որչափ կարեւոր է քաղաքացի մը լինելու համար, և եղած է ալ արդէն: Իր բնակարանն է քաղաքիս Կոռովին փողոցի մէջ, և լաւ վիճակ ունի: Այս երկրին հասնելէ առաջ Պ. Թիւսիւզեան նշանուեցաւ, և այդ հասկացողութեամբ թողուց իր երկրին որ երբ նիւթական բարեօր վիճակի մը հասնի հոս, իւր խօսեցեալն հետեւի իրեն: Տիկին Թիւսիւզեան երէկ հասաւ Փաթըրսըն, և պատկուեցաւ միևնոյն օրն, որմէ անմիջապէս վերջ նորապսակ զոյգնեցաց հաստատուել իր տան մէջ:

— Վաչինկիճընի Օսմ. Դեսպանատան առաջին Թարգմանին, Տիար Մ. Նորիկեանի Գ. կարգի Օսմանիյէ պատուանշան տրուած է:

— Սեպտ. 3 ի Երեկոյն Հայ գաղթականութեան հայրենասիրական դուամբումն խիստ յաջող եղաւ, ներկայից թիւն 100 ի չափ էր. և ատենախօսութիւնք խիստ համակրելի էին:

— Նոյնպէս Սեպտ. 10 ի գումարումն մի յաջողութիւն էր: Արեւելեան Աստղ սրահն 100 է աւելի Հայեր կը պատուակէր որք անչափա կը գայրանային ի լուր այն խաղաղութեանց որք տեղի կուենային պարբերաբար ի թրքական Հայաստան:

ՍՈՒՐՉԱՆԴԱԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Յառաջ իկայ Սեպտեմբերի 21 էն սկսեալ ՍՈՒՐՉԱՆԴԱԿ պիտի հրատարակուի ամէն շաբաթ մի անգամ իւր ներկայ ուղղութեամբ:

Շաբաթաթերթս պիտի տպագրուի մեծ գիրքով մաքուր թուղթի վրայ, Տարեկան բաժանորդագրին պիտի լինի, Միացեալ Նահանգաց ու Քանադայի համար Մէկ տողար միայն, իսկ ուրիշ երկրներու համար՝ մէկ ու կէս տողար: Թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ է:

Բաժանորդագրին կանխիկ վճարելի է, և դիւրութեան համար՝ առանց բաժանորդագրին ստանալու թերթ չի պիտի ղրկենք:

Լրագրոյս այժմեան բաժանորդներն մինչ Յունվար պիտի ստանան «ՂՍուրճանդակ» առանց բան մը վճարելու, եթէ այժմէն բաժանորդագրուին Բ. շրջանի համար:

Ներկայ յաւելուածովս կոչուած կրնենք Հայ հասարակութեան մէն մի անդամոց աղգասիրական զգացման աշխատիլ՝ ըստ կարի՝ մանուկ գաղթականութեանս աղատական լրագրի յաջողութեան համար, ո՛չ թէ Խմբագրի շահուն, այլ միայն յանուն աղգութեան և յօգուտ Հայ գաղթականութեան: Հարկ է ըսել նաեւ թէ մեք յոյս մեծ ունիմք որ մեր աղգայինք պիտի փութան մինչ Սեպտեմբեր գործնականապէս միանգամաւ ցոյց տալ այն քաղաքի որն ցոյց տուին թերթիս ծննդեան ժամանակ, և կասկած չունինք թէ բաժանորդագրուիլ փափաքող ամէն անձեր որոշեալ ժամանակէ առաջ մեզ յղած կը լինին իրենց հրաման, որպէս զի գործի սկսած ատեննիս կարողանանք գիտնալ մեր բաժանորդաց թիւն և ըստ այնմ կարգադրութիւններ ընել:

Մըար կամ նամակ ղրկել հարկ է լրագրոյս խմբագրութեան հասցէին որն կարելի է գտնել երկրորդ երեսի վրայ:



Կը հրատարակուի առ այժմ ամէն ամսոյ
քսան եւ ութներորդ օրը-

— ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ —

Տարեկան 25 սէնթ
Թղթատարութեան ծախքը բաժա-
նորդաց վրայ է: Բաժանորդագիրն է
կանխիկ վճարելի: Ծանուցումներ կըն-
դունուին գոհացուցիչ պայմաններով:

MR. and MRS. BYRON M. CURR Sole
American Representatives, Reporters and
Agents for the Armenian Journal "SOUR-
HANTAG",
3 Serrell st., West Hoboken, N. J.

Նամակ կամ ծրար դրկելու է առ
այժմ հետեւեալ հասցէին.

To The Editor of THE SOURHANTAG,
West Hoboken, N. J.
U. S. America.

ԾԱՆՈՒՍՈՒՆԵՐ ԵՒ ՏԱՆՑ ԹԱՏՈՒԿ
ԳԵՏԻՆՆԵՐ

Ինտիմ ընկերակցութեան ընկերու-
թիւնը աժան գներով, դիւրաւ ձեռք
կամ շարժական վճարով կը գտնուի, հազ
և ջուր ունեցող ու սալաշատակ փողոց
ներու վերայ տներ և տանք համար
յատուկ գետններ կառավարիչ վաճա-
ռելու համար: Գիրք
Ս. Բ. ՍԻՄՍԻ
Յըրաթ Նէյշնլ պանք,
Հոփոֆըն Ն. Ճ.

Յ. ԸՇՈՒԱՊ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

ԸՆՏԻՐ ԳՈՇԱՐՆԵՐՈՒ, ԱԴԱՄԱՆԴ-
ՆԵՐՈՒ, ԾՈՅԻ ԵՒ ՊԱՏԻ ԺԱՄԱՅՈՒՆ
ՆԵՐՈՒ, ԵՒՆ. ԵՒՆ.

Թիւ 451 Փալատ Ալընիւ, Կրիֆթի
փողոցին մօտիկ
ձէրզի Սիթի, Նիւ ձէրզի:

Ամէն տեսակ նորոգումներ թէ՛
ժամացոյցներու և թէ՛ գոհարեղէն-
ներու վերաբերեալ կը կատարուին
չափաւոր գիններով և խիստ մաքուր:

L- ՈՒՕԼՖ

Թիւ 443 ՓԱԼԱՏԻՍ ՔՎԷՆԻ
ձէրզի Սիթի

— Պարզ և զարդարուն ապրանքներ —
Նոյնպէս ալարանց, երկտասարդաց և
մանկանց մեծ քանակութեամբ և ընտիր

ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Արանց յատուկ արդուզարդեր
ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ԵՒ ԱՄԵՆԷ ԱԺԱՆ

Գործակալ տիկնանց տեղական հա-
գուսններու տարազուց:

ԸՆԿԵՐ ՊԱՆԴԻՍԻՆ

Գրեց
Հ. ԷԿԻՆԵՍԻՆ

1885 թ. վեր Տ. Հ. Էկինեսին զը-
րած բանաստեղծութեանց մի հաւաքա-
ծուն է այս, որ տեսար առ տեսար ըս-
կած է հրատարակուիլ հեղինակի
տպարանին: Իւրաքանչիւր տեսար կը
բաժանուի 10 թիւ երկուսներ: Ըստա-
նալ փափաքողը գէտելու են հեղինակի
կամ «Սուրհանդակ» ի խմբագրութեան
հասցէին: Թղթատարի ծախքը ձրի է:
Գրին է մէն մի տեսարին 2 սէնթ և
կանխիկ:

Հաստատեալ է

1888

ՎԻԼԻԸՍ ԿԸԼՏԸՆ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

ԿԱՐԱՍԵԱՅ, ԿՍՊԵՐՏԻՅ, ԱՆԿՈՂՆՈՅ

ևն.

81—83 Պէրլընլին Ալ.

ԻԻՆԻԸՆ ՀԻԼ, Ն. Ճ. Լըվիս Փող- մօտ

ՏԳԹ. Չ. Գ. ԹԵՆՏՈՐԵԱՆ

249 Սաւեթի Ծօրթի Ըստրիտ

Հալմէյըրի մօտ.

ՊՐՈԴԱԿՏԻՆ, Ն. Ե.

Հիւանդ կընդունի

8 էն մինչ 10 ա. ժ.

12 էն մինչ 2 ե. ժ.

6 էն մինչ 8 ե. ժ.

ԿԻՒՐԱԿԻ ՕՐԵՐ

8 էն 9'10 ա. ժ. եւ 12 էն 9'2 ե. ժ.

Թէլէֆօն քօլ 78 Վէլըմսպըրկ

ՏԳԹ. Մ. ԱԹԹԱՐԵԱՆ

644 Իսթ 6 րդ Փողոց, Նիւ Եորք

Հիւանդ կընդունի
2 էն մինչ 4 ե. ժ.

Ֆ. ԲՈՐԹՍ

ԿԱՀԱՐԱՍԻԲ, ԱՆԿՈՂԻՆ, ԿԱՊԵՐՏ ևն

59 և 83 Ուաշինկթըն Ըստ-

Հոփոֆըն, Ն. Ճ.

Կահարասիբ, կապերու են կը վա-
ճառուի շարժական վճարումներով:

Ամէն տեսակ կահ և ապրանք կըն-
դունուի ի պահպանութիւն:

ԱԿԸՍԹԸՍ Ա. ՌԻՍԶ

Փաստաբան

152 Բլինթըն ավընու,

Վէսթ Հոպքըն, Ն. Ճ.

ՃՕՆ Ֆ. ՀՈՒՓԲԸՐ

Վաճառական

Տան և տուն յարդարելու վերաբե-
րեալ ամէն տեսակ երկաթեղէններ,
վառարան, վառօդ, գետնակ ևն. ևն.

— Միակ գործակալ —

Հօնկման և Մարթինէսի մաքուր ներ-
կերուն, իւղերուն ու վերնիճներուն:
414 Սէնթըլ Ալ. ձէրզի Սիթի Հայթս
Նիւ ձէրզի

ՐԻՇԱՐԾ Ֆ. ԿԱԼՊԵԹՅ

Ընդհանուր աճրդարար, հարկից Նօտար,
Գործակալութիւն

Հաստատուն կալուածոց և ապշվագրթ.
185 Բլինթըն ավ. Վ. Հոպքըն, Ն. Ճ.

Սիւնաւի և Քօրթլինաի միջև

Տներ վարձու կ'տրուին և վարձեր կը
հաւաքուին

ՉԱԻԼԸՍ Ֆ. ՄԻՆԹԸՐՆ

Օրէնսդէս փաստաբան

Թիւ 19 Նիւարք քաւ. Հոպքըն, Ն. Ճ.
Գործի ժամեր: — 9 ա. ժ. մինչ 6 ե. ժ.

Հայերէն «ըրպըր ըթէմը» ունե-
նալ փափաքողը թող կարգան Լը-
րագրոյ ծանուցումներն:

ՏԻԿԻՆ Պ. Մ. ՊԵՐՐ

ԴԱՍԱՏՈՒ

Գաղիարէն եւ անգլիարէն լեզուաց
Թիւ 3 Սուրբ Լըօրիտ,

Վէսթ Հոպքըն Նիւ ձէրզի

ԳԵՆՏԵՔ

Հոգեւոր ՆԵՐՍԷՍ Պատրիարքի և
Հ. ԱԼԻՇԱՆԻ պատկերներն որք կը վա-
ճառուին խմբագրութեան քով:

Գրին ԻԻՐԱՐԱՆԶԻՐԻ 10 Սէնթ

— Կանխիկ —

ՏԳԹ. Մ. Մ. ԳԱՐԻԷԼԵԱՆ

— 202 Վէսթ 23 րդ փողոց, Նիւ Եորք —

Հիւանդ կընդունի.

Առաւօտեան ժամը 9 էն 9'12

եւ երեկոյեան ժամը 8 էն 9'7

Ր. Փ. ԿՐԱՆՍՄ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Ջարդարուն և ամէն տեսակ ապրանքաց
թիւներ, ասեղնագործեալ

ապրանքներ, արանց և կանանց ձե-
մակեղէններ, ընդհանրապէս տան վե-
րաբերեալ կտաւեղէններ ևն. ևն. ևն.

456 Սէնթըլ Ալ. ձէրզի Սիթի

— Սալթի և Քօնկրէսի միջև —

Ֆ. Լ. ՊԷՂԻՍ

Վաճառական և շինող տեղական ու
Հալմէյըրի սիւրսերուն

Ամէն տեսակ գլանիկներ, ծխախոտ,
ծամեխախոտ ու ծխողաց յատուկ նիւթեր
460 Սէնթըլ Ալ. ձէրզի Սիթի Հայթս

ՃՕՆ ՔԷՄՓԸԼ ՈՐԴԻ

Գեղարուստ

Սալթի և Սըմթի Ալըն. ի անկիւնը
ձէրզի Սիթի, Ն. Ճ.

Տարիներ ի վեր Հայոց համար կեդ-
րոնաւոր եղող գեղարանն է այս ուր
մասնաւոր աշխարհի իւր կը նուիրուի
Հայ յաճատորդաց:

Վէսթ Հոպքընեան

ԱՇՈՒԹԻ ԵՒ ՓԱՅՏԻ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Կարմիր և ճերմակ մօխի ունեցող ա-
ծուխ ամենամաժան գներով

Գրասենեան և վաճառատեղի
197 Բլինթըն Ալ.

Չէմպրս փողոցի ստըլ

Վէսթ Հոպքըն, Ն. Ճ.

Ճ. Փալմըրսըն — Տէր

Ժ. ԸՇԼԷՔԵԹԸՐՆ

Լուսանկարիչ եւ արուեստագէտ
Թիւ 345 Սէնթըլ Ալընիւ

Քէյպըր'ս Հօլի առջև, ձէրզի Սիթի Հայթս
Բարեկամ բոլոր Հայոց

Հ. ՊՐՈԹՔՆԸՐ



Չափազան ապրանքներ,

Շաքարեղէններ, պարզ և զարդարուն
ապրանքներ,

ՊԱՏՐԱՍՏ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ,
գլխարկ, խոյր, գլրոց ևն.

Թիւ 421 Սէնթըլ Ալ. Սալթի անկն.
ձէրզի Սիթի Հայթս

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՆՏԵԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Գրեց

ՏԳ. Մ. ՍՄԻՐԱՏ ԳԱՐԻԷԼԵԱՆ

Սա տետրը 60 երեսներէ կը բաղ-
կանայ. կը վաճառուի 20 սէնթի. Գը-
նեւ փափաքողներն զիմեւ են Լը-
րոյս խմբագրութեան:

Թղթատարի ծախքը ձրի է, իսկ
վճարմունք կանխիկ են:

ԱՉԴ

Հայերէն ամէն տեսակ կնիքներ և
«ըրպըր ըթէմը» ունենալ փափա-
քողներն կը հրաւիրուին զիմեւ Հ. Է-
կինեսին որ իր գներովն պիտի գոհաց-
նէ յաճատորդները:

ՏԳԹ. ՃԻԼԻԸՍ ՓԻԹԸՐՍ

— Ատամնագործ Վիրաբոյժ —

965 Սըմթի Ալ. ձէրզի Սիթի

Կրիֆթի Փողոցի անկիւնը

ԱՉԴ

Հայերէն տոմար, այցեւոմար և
մանր տետրակներ տպագրել տալ փա-
փաքողը կը հրաւիրուին զիմեւ Լը-
րոյս տպագրչին որ չափաւոր գներով կը
խոստանայ գոհացնել յաճատորդները:

ԱՉԴ

Մայր Հայաստանի և Հայ Թագաւո-
րաց պատկերներն մեծ և ընտիր թուղ-
թի վրայ միասին տպագրուած՝ կը
վաճառուի խմբագրութեան քով 50
սէնթի միայն: Յանձնարարութիւն
հաշու կը կատարուին: Գրին են կան-
խիկ են. թղթատարի ծախքն է ձրի:

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ

ՆՕՐԹՀ ՀԸՏԱԸՆ ՔԱՎՆԹԻ ՇՈԳԵԿԱՌԱՅ

Գէս գիշերէ վերջ տեղի երկ-
եւեկող կառքերու հմր:

Կայարանէն նաւահանգիստ Վէսթ Հո-
պքընի ճամբով

2,10 Ա. ժ. 2,20, 12,50, 12,40,
1,10, 1,55, 2,25, 2,55, 3,25, 3,55, 4,25
4,55 ևն.

Նաւահանգիստէ կայարան Վէսթ Հո-
պքընի ճամբով

12,25 Ա. ժ. 1,25, 1,45, 2,15, 2,45
3,00, 4,00, 4,50, 5,00, ապա ընդմերթ:

Կայարանէ նաւահանգիստ իւ-
նիւն Հիլի ճամբով

12,05 Ա. ժ. 12,55, 1,05, 1,35, 2,20
3,20, 4,20, 4,55, 5,05 ևն.

Նաւահանգիստէ կայարան իւ-
նիւն Հիլի ճամբով

12,15 ա. ժ. 12,50, 12,45, 1,15,
1,45, 2,15, 3,00, 4,00, 5,00, 5,55, 6,45,
ևն.

Սէնթըլ Ալընիւէն նաւահանգիստ.

12,10 ա. ժ. 12,20, 12,50, 12,40,
1,10, 2,15, 3,50, 4,50, 5,05, 5,15, 5,25
5,35 և ապա յաճախ:

Նաւահանգիստէ Սէնթըլ Ալ.

12,45 ա. ժ. 1,45, 3,05, 4,05, 5,05
ապա երկաթուղոյ ճամբով:

Քօրթ Հաւդէ նաւահանգիստ

12,05 ա. ժ. 12,15, 12,25, 12,55,
12,45, 12,50, 1,15, 1,45, 2,35, 4,05,
5,05, 5,20, 5,50, 5,40, և ապա յաճախ:

Նաւահանգիստէ Քօրթ Հաւդ

12,45 ա. ժ. 1,15, 2,15, 3,55, 4,55,
5,00, 5,10 ապա երկաթուղով յաճախ:

Հոպքընէ ձէրզի Սիթի

12,45 գիշեր, 12,15, 12,30, 12,
44, 1,15, 1,45, 2,15, 2,45, 3,15, 3,45
4,15, 4,45, 5,00, ապա 8 և 4 րոպէին

միանգամ, վերադառնալով ձէրզի
Սիթիէն կէս ժամ ուշ:

Հոպքընի նաւահանգիստէ 14րդ փո-
ղոցի նաւամատոյցն Ուաշինկթըն փողո-
ցի ճամբով

2,45, 3,45, 4,45, 5,00, 5,10, կը
վերադառնայ 3,15, 4,15, 5,10, 5,20,
5,30 ևն.

Նոյն վայրէ 14ի նաւահանգիստը Վիլ-
փողոցի ճամբով

12,05, 12,20, 12,35, 1,15, 1,25,
1,53, 2,15, 3,15, 4,16, 5,05 և յետոյ
10 րոպէին միանգամ: